



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. Պ. Ե Կ Ա Խ Ա Ր Ա Ր Ա

Ի Ն Գ Ե Ս Ա Խ Ե Հ Ա Ա Խ Ե Լ
Դ Ե Ղ Ա Ր Ա Խ Ա Վ Ա Ր Ը

Հ Ա Խ Ա Վ Ա Ր Ը - Շ Ա Խ Ա Վ Ա Ր Ը



Պ Ե Տ Ա Ր Ա Խ Ա Վ Ա Ր Ը 1984



Ա. Գ. ԿԱՀԱՇՆԻԿԻՆՎ.

(Ավտոդ ուսուցիչ
Զինվորական բժշկական ակադեմիայի)


633.89

4

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՔԵԼ
ԴԵՂԱԲՈՒՑՍԵՐԸ

Փոխադրեց Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

A 4603



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

Առաջարկուն

3

Ա. ՄԱՍ

1. Խնչիք սկսել	5
2. Ցեղը և ինչպես պետք և հավաքել գեղաբույսերը	8
3. Ինչպես պետք և չորացնել դեղաբույսերը	14
4. Բաւժական բույսերը պահպանելու մասին	17
5. Դեղաբույսերի վերամշակման մասին	19

Բ. ՄԱՍ

1. Ինչ դեղաբույսեր կարելի յև հավաքել և մշակել Առը:	23
2. Վոր ամիսներին ինչ դեղաբույսեր են ծաղկում	26
3. Վոր ամիսներին ինչ դեղաբույսեր կարմի յև հավաքել	28
4. Թարմ գեղաբույսերը չորացնելուց 100 ըաշից թանի տոկոս	30
5. Դեղաբույսերը չորացնելուց նրանց քանի տոկոսն և կարչում	39
6. Վերջարկուն	40



2 8 5 8

Գատառնամատու խմբագիր Հ. Գամալյան
Տեխնիկական խմբագիր Գ. Մ. Մարգարյան
Հանձնված և արտադրույյան 8/VI 1933 թ.
Ստորագրված և տպելու 18/VI 1933 թ.
Ստատորման Ծ 125x176 Նախալ 1½ մամուկ
Գյավլիս 8153 թ. Գատվեր և 3013 Տիրամ 2000
Տիպոգրաֆիա ամ. "Стачки 1902 թ." СККПТ Ռօստօն-Դօն

ԱՌԱՋԱՐԱՆ

Ում հայտնի չեն այն բազմատեսակ դեղերը, վոր բժիշկները նշանակում են հիվանդների համար—դեղափոշի, հեղուկ, դեղի կաթիլներ, քսերու դեղեր և այլն:

Մարդկությունը շատ հին ժամանակներից, իր ցավերը բժշկելու համար, իբրև բուժիչ միջոցներ գործադրում եղանական բուսական նյութեր—թե ամբողջ բույսերը և թե նրանց առանձին լմասերը (ծաղիկ, արմատ, մղած հյութ և այլն):

Դիտական բժշկության դարգացման հետ, ժողովրդի գործածած դեղաբույսերից շատերն անպետք են ճանաչված, մինչև անդամ վնասակար, շատերն ել ճանաչելով վորպես իրոք բժշկական ներգործություն ունեցող դեղաբույսեր, զիտության կողմից ճանաչված բժշկական միջոցների շարքն են մտել:

Խոսելով դեղաբույսերի մասին, պետք է նկատել, վոր նրանք գործադրվում են վոչ միայն անկախ կերպով դեղորայք պատրաստելու համար (դեղափոշի շինելու, յեփ տալու, նյութ հանելու և այլն), այլ և Փարբիկներում, գործարաններում այդ դեղաբույսերից քիմիական-ֆարմացիական միջոցներով ստանում են բժշկության մեջ գործադրվող այն բազմաթիվ բուժիչ ներգործություն ունեցող մաքուր տեսքով նյութերը, վոր կան այդ բույսերի մեջ:

Զանազան բույսեր իրենց մեջ շատ բազմատեսակ նյութեր են բովանդակում: Որինակ, մի քանիսը հարուստ են շաքարով (շաքարեղեղ, ճակնդեղ), մյուսներն ուլայով (կրախալով), ինչպես՝ ցորենը, կարտոֆիլը, յերրորդը — յուղով, (վուշի սերմ, արեածաղիկ, տիղկանեփ), չորրորդը — տապային հյութով (կաղնի ծառի կեղեց):

Բացի այդ նյութերից, վոր գտնվում են այս կամ այն բույսերի մեջ մեծ քանակությամբ, վոր հասնում է 20, 50, 70 և ավելի տոկոսների, զանազան բույսերի մեջ գտնվում են և մի շաբթ ուրիշ բազմաթեսակ նյութեր ևս՝ աննշան քանակով, վորոնք մի քանի տոկոսից ավել չեն լինում, կամ մինչեւ անզամ մի տոկոսի տասնորդական կամ հարյուրերորդական մասն են կազմում: Բայց սրանց մեջ ել պատահում են այնպիսի նյութեր, վորոնցից շատերն, ինչպես գիտական հետազոտություններն են ցույց տվելու ահապին կուլտուրական արժեք ունեն, նրանցից շատերը (որինակ, խինինը, պիրկարպին, ատրոփինը մի քանի յիթերական յուղ ունեցողները և այլն) շատ գնահատելի և վոչ մի բանով չփոխարինվող բժշկական նշանակություն ունեն:

Մեր յերկրում խոշոր հնարավորություններ կան թե դեղագույսերի մշակությամբ զրադվելու և թե մեծ քանակությամբ հարկավոր դեղաբույսեր հավաքելու համար, վորոնք վայրի դրությամբ աճում են, դժբախտաբար այս կարեվոր խնդրի վրա լուրջ ուշադրություն չի դարձվել: Այս հանգամանքը կարեվոր ե մանավանդ և այն տեսակներից, վոր խորհրդային յերկիրը զրադվելով դրանով՝

1. Կարիք չի ունենաւ արտասահմանից հում նյութեր գնելու և այդ գործի համար վոսկիներ չի ծախսի:

2. Միջազգային բարդությունների վեպքում, արտասահմանից բժշկական բույսերի նյութեր չստանալու դեպքում չի զգա նրա սովոր հետեվանքները:

3. Բժշկական բույսերի մշակությունը և հավաքելու գործն ընդարձակելով, սիստեմատիկաբար հնարավոր կլինի ավելացածն արտահանել:

* Համաձայն գոյությաւն ունեցող որենքների, այն անձինք, վարօնց պարապում են բժշկական բույսեր հավաքելով կամ այդ բույսերի մշակությամբ, ողտկում են հարկային արտոնություններով:

1. ԻՆՉԻՑ ԱԿԱՆ

Դիտական հետազոտություններով հաստատված է, վար բույսերի մեջ բժշկական ավելի շատ ներգործություն ունեն այս կամ այն մասերը, դրա համար ել վորոշ բույսի միացյան ծաղկներն են գործադրում. որինակ՝ յերիցուկի, ռածաղկի (ромашка), թանթրվենու (бузина), լորու (ланна) և այլն. մյուսներից արմատները — կամ մազմզուկը (որինակ աղբաղբուկը (կատվախոտը — валерянка), գաբծիլ (խաչնդեղ — ревене), խոլնջանը (калечан), յերրորդներից միայն պտուղը՝ նուշի, խաբդալի, վուշի, չորրորդից՝ միայն տերեփները — անանուխը, մոլիխինդը (բանդին — белена), յեղեսպակը (шалфей), մատնոցուկը (наперстянка), կամ խոտը, այսինքն բույսի գետնից զուրս գոտնված մասը, ինչպիսիք են՝ բարձմնիկին (յովշանը — полынь), հաղարատերենուկին, (тысячелист), արջընկույզին՝ (փշախնձորի — дурман) և այլն:

Բժշկական բույսերի հարցը զիտական քննության յենթարկելով, պարզվել է, վոր ավելի շահեկան ե վայրի բույր սերը հավաքել, իսկ մյուսներն անհրաժեշտ ե. մշակել, վորովեսդի նրանց մեջ մեծ քանակությամբ բուժիչ նյութեր հավաքվեն: Հետո հետազոտությունները ցույց են տվել, վոր միենույն բույսերի մեջ բուժիչ նյութերի քանակը կախում ունի կլիմայական և հողային պայմաններից: Վերջապես, նայած զանազան դրանների կիրայական և հողային պայ-

մաններին, մի տեղ մնծ քանակությամբ, մի ուրիշ տեղ քիչ բույսեր են պատճում:

Ահա թե ինչու՞ ով մտադիր ե վայրի բույսեր հավաքելով զբաղվելու, ամենից առաջ պետք ե պարզի, թե արյալ վայրի վոր բույսերը մեծ քանակությամբ են բուսնում. դրա համար ավելի լավ ե խորհրդակցել գործին տեղյակ անձանց—դյուդատնտեսների և գեղագործների (փարմացեվտների) հետ:

Այս կամ այն բույսի հավաքելը վորոշելուց հետո՝ անհրաժեշտ է առաջ գրքերով, պատկերներով, պլակատներով.



Դկ. 1 Յերիցուկ



Դկ. 2 Հազարտակերեվակ

իսկական ճիշտ որինտկներով կամ գործին հմուտ անձանց խորհուրդներով (գյուղատնտեսների, զեղագործների) ծանոթանալ այդ բույսի առանձնահատկությունների վորոշ նշաններին, վոր այդ ե ձեր ցանկացած բույսը և վոչ մի ուրիշը, վոր կարող ե նրա նման լինել և բուսաբանական տեսակետից՝ ազգակից, բայց բոլորովին անպետք՝ բժշկականության համար, քանի վոր նրա մեջ չկան հարկավոր շափով բուժիչ նյութեր: Որինակ՝ յերբ հավաքում են սովորական բուժիչ յերիցուկ (լուածաղիկ, տես նկ. 1), այդ բույսը չպիտի խառնել ուրիշների հետ, վոր շատ նման են, բայց բժշկական նշանակություն չունեն—ինչպիսիք

են՝ դաշտային աղբանթեմը (ոսուակա ողևայ), չնալվածաղիկը (քոմակա սաբառե) և ուրիշները։ Սովորական լվածաղիկը զանազանվում է մյուս տեսակներից նրանով, վորնրա ծաղկի վլուխը դատարկ է, այդ կարելի յեւ տեսնել ծաղիկները կտրելուց (տես նկ. 7, բ.):

Բոլոր վերել ապածներն առավել ևս նշանակություն ունեն, վորովհետեղ շատ անդամ միյելվնույն բույսերը ժողովրդական զանազան անուններ են կրում, որինակ՝ հազարտերելվուկին (նկ. 2) մուսաստանում մոտ 50 անուն են տալիս։ Մյուս կողմից՝ շատ անդամ միեննույն անվան տակ զանազան շրջաններում հայտնի յն բոլորովին տարրեր բույսեր, որինակ՝ յեղեսպակը (առլիք), (նկ. 3), վոր մուսաստանում մշակվող բույս է, և նրա տերելվները գործ են ածում բժշկականության մեջ, իսկ մի քանի տեղերում այդ անունով ուրիշ վայրի բույսեր կան, վոր բժշկականության մեջ չեն գործածվում, այդպիսիներից և բարձմենիկը (յովշանը – ՌՕԼԵԱԽԵ):

Յեթե վորեն մեկը մտադիր է պարապել վայրի ղեղարույսեր հավաքելով, նա շպիտի թալանողի զեր կատարի, որինակ՝ վայրի բույսի միայն ծաղիկները և տերելվները հավաքելիս, չպետք է զուր տեղը արմատից հանի։ Մաղկաբեր բույսեր հավաքելիս, չպետք է յեղածն ամբողջովին փշացներ, ընդհակառակը, պետք է հոգալ վոր բույսի մի մասը մինչև սերմերի հասնելն անձեռնմխելի մնա, այսինքն՝ մինչև սերմն ինքնիրեն թափիվի, հակառակ դեպքում՝ պետք է այդ հողամասում հավաքած բույսերի սերմերից ցաներ Ցանելը նույնպես ոգտակար է, յեթե տվյալ վայրի հողը նման է այն հողին, վորտեղ այդ բույսերն ինքնագլուխ զարդացնել են, վորով շահագրգույած է հավաքողը։ Մերմ.



նկ. 8 - ա Յեղեսպակ

Հցանելու գեղքում, ուարեց-տարի գնալով՝ կփչանան այդ
բույսերը (ինչպես այդ հաճախ պատահում ե)։

2. ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՔԵԼ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԸ

Բույսի գետնից դուրս յեղած բոլոր մասերը (ծաղիկներ,
տերեփներ, խոտեր) պետք ե անպատճառ չոր և պարզ յե-
ղանակին հավաքել, վորովհետեւ թրջված բույսերի չորա-
նալն ավելի յիրկար ե տեվում և չորանալիս կարող են փշա-
նալ (գույնը փոխել և կորցնել իրենց բուժական ազդեցու-
թյունը)։ Գետնի տակ յեղած բույսի մասերը (արմատները,
ժաղմզուկները, պալարները — բայց առաջնային պետք ե չոր
և վոչ խոնավ ժամանակ գետնից հանել)։



Ակ. 4 Անվարիկ



Ակ. 5 Հավտաշուշան

1. Մաղիկներ սովորաբար հավաքում են բույսի ծաղկելու
սկզբին։ Հավաքում են ձեռքով ծաղիկները կտրելով, կամ
կտրելու հատուկ միջատով։ Կան բույսեր, վորոնց ծաղիկ-
ները մեկ են նստած, որինակ, սկլեռիկը (շերոգօրկա)
(Ակ. 4), ուրիշ բույսերի ծաղիկները հավաքված են ամբողջ

ջիկով, որինակ հովտաշուշանինը (լահծա) (նկ. 5), կան
այն պիսիներն եւ վորոնք հովանոցի ձևով են զասավոր-
ված, որինակ սամիթը, անխոսնը (ահւէ): Բացի այդ՝ շատ
անգամ պատահում ներարդ ծաղիկներ, որինակ կրաբանջա-
ռը (օդյօնկակ), վոր բաղկացած ե բազմաթիվ բաժան-բա-
ժան մանր ծաղիկներից՝ մի տեղ հավաքված (նկ. 16):



Նկ. 6 Կռաբանջար



Նկ. 7 Շնախաղող

Հավաքած ծաղիկները թեթև շերտով դնում են զամբ-
յուղներում, բայց վոյ յերբեք տոպրակներում, վորտեղ կա-
րող են սասափիկ տրորվել, վորովհնետեվ շատ քնքուշ են:

Բժշկության մեջ գործածվող ծաղիկներից հայտնի յեն
նույնպես փոխչուկը (արհակա), լվածաղիկը (րոմաշակա),
թանթրվենին (բցանա), շնախաղողը (կօրօնիակ) (նկ. 7)
և ուրիշները:

2. Տերեվները հավաքում են զլիավորապես բույսի ծաղ-
կած ժամանակի: Քաղը կատարվում է կոթը կոտրելով կամ
կտրելով: Թեթև տերեվները մանր են, ինչպես որինակ ար-
ջախաղողն ե (տօլօքանիա), այն ժամանակ պետք ե շվերը
կտրել իրենց տերեվներով և ծաղիկներով, կամ ամբողջ
բույսը հանել և չորացնելուց հետո շվերից աղատել, բարակ

շերտով զարսել; Բժշկության մեջ գործածվող տերեվներից հայտնի յեն՝ մոլին (շնախաղողը — красовка), մոլեխինդը (ծելենա), արջընկույզը (փշախնձորին — дурман), մատնցուկը (կառուտնիկ), անանուխը, յեղեսպակը (առլիք), արջախաղողը (толокнянка) և ուրիշները:

3. Խօսեր: Բժշկության մեջ խոտ անվան տակ հասկացվում և բույսերի գետնից դուրս բարձրացած ամբողջ մասը, այն եւ ցողունը տերեւներով, ծաղիկներով (և յերբեմն պլատուզներով):

Խօսերը հավաքում են այնպես, ինչպես ծաղիկները, սովորաբար բույսի ծաղկած ժամանակի Հավաքում են դաշնակով կամ մանգաղով, ձեռքով քաղելն այնքան ել հարսմար չե (կարող և արմատահան լինել), վորպեսզի հավաքվող խոտերն ուրիշ անպեսք խոտերի հետ չխառնվեն, պետք և չհնձել:



Նկ. 8 Բեկանի

Բժշկության մեջ գործածվող խոտերն են՝ սելեռիկը (черногорка), բարձմենիկը (յովշանը — полынь), գետնալեղին (золототысячник), հովտաշուշանը (ландыш), հազար տերեւնուկը (тысячелистник) և այլն:

4. Կեղեվը: Ծառերի և թփերի ճյուղերի և ջահել բների կեղեվը սովորաբար հավաքում են գարնանը՝ տերեւները բացվելուց առաջ, վորովինետեղ այդ ժամանակ ծառի բունը և ճյուղերն ավելի հարուստ են լինում ներգործող բուժիչ նյութերով:

Կեղեվի վրա դանակով յերկու հակադիր դիմ են քաշում, հասցնում մինչեւ փայտեղեն մասը և դրանց միացնում յերկու կամ մի քանի յերկար գծերով, վորից հետո կեղեվը

խողովակածե հանում են: Հին նյուղերի կեղեվը կարելի յե հանել հաստ շերտով, բայց այդ այնքան ել արժեքավոր չե և այն նյութը չունի իր մեջ, ինչ բանի համար վոր հա- վաքում են:

Բժշկության մեջ լայն գործադրվող
կեղեվներից մեզանոկմ հայտնի յեն
կտղնու և մամիսու (բեկտենի—Կրյ-
ասիս) կեղեվները (նկ. 8):

5. Արմատները: Բժշկական բույսերի
արմատները բահով կամ փոցխով հա-
նում են աշնանը, յերբ գետնից բարձր
գտնված մասերը թառամում են, կամ
վաղ գարնանը՝ մինչև նրանց զարգա-
նուլը, վորովհետեւ միայն այդ ժամա-
նակամիջոցումն են արմատները մեծ
քանակությամբ բժշկական հարկավոր
հետաքրքիր նյութեր պարունակում:

Բժշկականության մեջ գործադրվող արմատներից հայտնի
յեն՝ տուլար (ալոե), մոլոշ (պրօսբրիակ) (նկ. 9), մա-
տուտակը (լակրապհիկ), կուարանջարը (խոտուտիկ — օծուակ-
ակ) և գետնապալարները (ռացիա). վերջիններս ել հա-
վաքում են արմատների պես:

6. Մազմուկները հողի տակի ցողուններն են, վոր ար-
մատի նման փոփում են հողի տակ՝ հորիզոնական ուղղու-
թյամբ և դրանցից նոր ցողուններ են առաջանում, դետնի
յերեսը դուրս գալիս, բայց վոչ նույն տեղում, ինչ վոր նա-
խորդ տարին ե յեղել:

Բժշկականության մեջ գործադրվող դեղաբույսերը, վորոնց
մազմուկներից ոգտվում են, ազբազրուկն ե (կատը վախոտ—
վալերիանա) (նկ. 10), խաշնդեղը (գարծիլը — բերեն) և այլն:

Ենք գետնի տակի ցողունը սննդաբար նյութերի պա-
շտրով լցվելու հետևանքով ուղչում ե, այն ժամանակ նա-



նկ. 9—Մոլոշ

գետնապալար և կոչվում (որինակ՝ կարտոֆիլլ): Բժշկական գետնապալարներից հայտնի յեն՝ աքոնիդը (ակոնիտ) և ձվատակը (խոլորձի — թորական):



Ակ. 10 Ազրապակ

Գետնապալարները պետք ե հավաքել դեռ ջանել ժամանակը, յերբ դեռ չեն կնճռոտել և նախորդ տարվանից մեացնել են հողի տակ:

7. Պատկենեն առաջանում են ծաղիկները բեղմնավորվելուց հետո բռնած կոճակի զարգանալուց: Պտուղները լինում են չոր-և հյութալի Չորպտուղներն իրենց հերթին բաժանվում են՝ բացվաղների (որինակ՝ լոբու պատիճները և չրացվաղների (որինակ՝ հացարույսերի հատիկները, կաղինը, ընկույզը)): Հյութալի պտուղների մեջ լինում են կորիզներ (որինակ՝ բալլը, դամբուլը), հատապտուղներ (որինակ՝ հապալասին — կլօւկօա) (նկ 12), հաղարձը (զարդաթը — սմօրօսիա), տանձը, խնձորը:

8. Սերմեր: Բժշկականության համար կարևոր սերմերը հավաքում են հասած ժամանակի: Սերմ ստանալու համեաք ե հավաքել կամ պտուղները, յերբ նրանք խոշոր ու հառած են (որինակ՝ խաշխաշի գլուխները), այլ դեպքում, բույսի գետնից բարձր գտնվող մասերը, կամ յերբ պտուղները մանր են. բաժանում են պտուղները և բույսը չորացնելուց հետո, թակելով հանում են:

Պտուղներից բժշկականության մեջ գործածում են կանեփի, սամիթի, հապալասու (չերնիկա), մալինայի, դիհու (МОЖИСЕ-ՅԵԼԻԿ), անիսոնի (ահուս) պտուղները, իսկ սերմերից՝ վու-

Հը խարդալը (շօրպազա), նուշը և այլն. այստեղ պետք է հիշենք և այն, վոր կան բույսեր, վորոնք բազմանում են վոչ թե սերմերով, այլ սպորաներով (մանրեներով): Այդ բույսերի մանրեները դոյցանում են առանձին պարկերի մեջ:

Սպորային բույսերից բժշկականության համար հայտնի յե գետնամամոււրը (գետնամուշկը, ուլացի) (նկ. 11), այն մշտականաչ փոքրիկ բույսը, վոր մեծ քանակությամբ ա-



Նկ. 11 Գետնամուշի



Նկ. 12 Հապալասին

ճոււմ և անտառներում: Այդ բույսի հասկերը հավաքում են, չորացնելուց հետո թափ տալիս նրա դեղին դույնով փոշին, վոր այդ բույսի սպորներն են:

Խոսելով դեղաբույսերը հավաքելու մասին, պետք ե նկատել, վոր յերբեմն շատ գեղաբույսեր իրենց մեջ պարուակում են շատ թունավոր նութեր, դրա համար ել պետք ե հավաքելու ժամանակ վորոշ զգուշություն ունենալ:

Թունավոր գեղաբույսերից հայտնի յե աքոնիտը, շնախազողը, մոլեխինզը (բանդին), արջընկույզը (ծորման), մատնոցուկը և այլն: Այդպիսի բույսերի հետ դրծ ունենալիս պետք ե ձեռները բերանին, քթին, աչքերին չմոտեցնել և գործը վերջացնելուց հետո՝ ամեն անգամ ձեռքերը մաքուր լվանալ:

4. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԶՈՐԱՑՆԵԼ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԸ

Շատ քիչ դեղաբույսեր կան, վոր գործածվում են թարժ գրությամբ, որինակ՝ հովտաշուշանը (լոհծա), վորից խմելու դեղ են պատրաստում, ջրի մեջ պահելով՝ հյութը հանում: Իսկ սովորաբար բժշկական նողատակների համար ոգտագործվում են չորացրած բուսական նյութերը:

Դեղաբույսերը չորացնելու վրա հավաքողները պետք ե լուրջ ուշադրություն դարձնեն, վորովհետև չորացնելու յեղանակից և կախված հավաքած հում նյութի լավորակության աստիճանը և նրա արժեքը:

Նախ քան չորացնելը, հավաքած բուսականությունը պետք է ջոկել, ընտրել, զեն ձգել զեղնած, միջատներով ծածկված տերենները, ծաղիկներն առանձնացնել իրենց կութերից և կպած տերեններից, սերմը մաքրել փոշուց և մաղով անցկացնել վար կողմնակի խառնուրդ չմնա մեջը, արմատները և արմատապառզները (պալարները) հողից մաքրել, թափ տալով կամ խողանակով, կամ սառը ջրով լվանալով:

Բացի այդ՝ արմատները և մազմղուկները շատ անգամ պետք ե լինում մաքրել յերկրորդական արմատներից կամ նրանց ծածկող կեղևից, զանազան մեծությամբ ձեռքով կտրատելով, որինակ՝ մատուտակի (լաքրինան), խաշնդեղի (քեշեն), և տուղօփ արմատները կեղևից մաքրում են և ընդհակառակ կաղնջանի (կալցա), բաղեղի (զմեսսիկ) և ուրիշների մազմղուկները կարիք չեն զգում մաքրելու: Արմատները, կեղևը և ուրիշ բուսական նյութերը կտրատելիս, աչքի առաջ պետք է ունենալ և այն, վոր նրանցից մի քանիսը տուպային նյութեր ունենալով՝ յերկաթե դանակին քսելուց սկսանում են. այդ դեպքում պղնձից կամ արույրից (լատուն) շինած դանակներ պետք ե գործածնել:

Դեղաբույսերը չորացնում են բաց ողում, սարայի տակ, տանիքի տակ, հատուկ շինած չորանոցներում:

Հորացնելու գլխավոր և հիմնական պահանջը շուտ չորտանան եւ Բուսական նյութերը պետք եւ ըստ հնարավորության շուտ չորացնել վորովինեաւ բույսի մեջ զանգող առանձին նյութերը, ջրի ներկայությամբ քիմիական փոփոխության են յենթարկվում և դրա հետեւանքով բուսական նյութերը մասամբ կամ ամրողջովին կորցնում են իրենց բուժիչ հատկությունը Բացի այդ, շնորհիք բուսական նյութերի մեջ յեղած խոնավության, հաջող պայմաններ են ստեղծվում բորբոսի և փտելու զարգացման, վորից ապրանքը բոլորովին անպետքանում եւ

Թե ինչքան ջրով հարուստ են հավաքվող բույսերի նյութերը, ցույց են տալիս հետեւյալ թվերը — միջին թվով տերեները չորացնելիս կորցնում են իրենց քաշի 80 տոկոսը, խոտերը և ծաղիկները՝ մինչև 75 տոկոսը, արմատները և մազմզուկները՝ մինչև 60 — 65 տոկոսը, կեղևանքը՝ 45 — 50 տոկոսը (ամենից քիչ ջուր լինում եւ սերմի մեջ):

Դրա համար ել չպիտի զարմանալ, վոր հավաքած մի կիրոգրամ յերիցուկի ծաղիկներից՝ չորացնելուց հետո ստացվում ե միայն 250 դրամ չոր նյութ կամ կատվախոտի (ռալերսահա), թարմ արմատներից՝ մոտ 350 դրամ չոր նյութ և այլն:

Իրեւ կանոն, պետք եւ դիտենալ, վոր գեղաբույսերը չկարելի արեի տակ չորացնել, վորովինեաւ ա) ծաղիկները և կանաչ մասերը կորցնում են իրենց գույնը (սևացած խոտերը բժշկականության մեջ անպետք են), բ) նրանց միջի բուժիչ նյութերը կարող են լուծվել, և դրանից ապրանքի արթեքը կը նկնի:

Կանոնավոր չորացնելու գլխավոր պայմանն ե հարկավոր տաքության մեջ պահել ($35 - 45^{\circ}$ Ցել.) և չորացած ապրանքն արեղակի ուղղակի լույսից հեռու պահել:

Դրա համար ել բաց ողում չորացնելը սովորաբար կատարում են չոր և տաք որերին, բայց անպատճառ շվա-

քում: Մի քանի արմատապտուղներ չորացնելուց առաջ պետք է յեռման ջրի մեջ կոխել, այս անում են ձվատակը (խոլորձի, յարեահան), գետնապալարը չորացնելիս, այն նպատակով, վոր վոչնչանա նրա ծլելու ընդունակությունը: Յեռման ջրի մեջ պահելուց հետո այդպիսի գետնապնդերը յեղջուրանման են դառնում:

Չորացնելու ամենալավ միջոցը՝ ամբողջ ամառվա ընթացքում ծածկած սարայի կամ թիթեղյա տանիքի տակ պահելն ե, մանավանդ յեթե հատակին փայտե տախտակներ լինեն փուած և կողքերի պատուհանների միջոցով շարունակ ողափոխություն լինի: Բացի այդ, սարայի մեջ ձողեր են գնում և նրանց վրա կտավի մազեր տեղավորում բուսական նյութերով, կամ մազերը կախ են տալիս:

Դյուղական տնտեսության մեջ գարնանը և աշնանը նով ժամանակին դեղաբույսերը չորացնելու համար կարելի յե ոգտվել նաև ոռւսական վառարանով: Յերբ հաց թխելուց 6 — 7 ժամ հետո վառարանի տաքությունն իջնում է 60 — 70°, իսկ առավոտյան դեմ մինչև 35 — 40° (բայց Յել.), վառարանի ներսը լավ մաքրում են և նրա մեջ հաստ թուղթ, խսիր կամ յեղեգնից գործած փուց փուռմ. հավաքած բուսական նյութերը, պատուղները չորացնելու համար փուռմ են 60 — 70 աստիճանի մեջ: Այսպես կարելի յե չորացնել հատապտուղները և այլ հյութալի մթերքները, իսկ տաքությունը 35 — 40 տոկոսի իջեցնելուց՝ խուեղեն և մյուս քնքույց նյութերը:

Մեծ տնտեսությունները, վորտեղ հատկապես պարապում են դեղաբույսերի հում նյութեր պատրաստելով, պետք է ամեն կերպ առանովված լինեն փոշուց տնային կենդանիների և թռչունների վնաս տալուց:

Այժմ մնում է մեզ մի քանի խոսք տաել նաև այն մասին, թե ինչ կերպ պետք է բույսի այս կամ այն մասը չորացնել:

Մաղիկները, տերեները և խոտերը չորացնում են քաղց անմիջապես հետո: Դրա համար խորհուրդ չեն տալիս կազուկներ շինել վորովհետեւ կազուկների միջի մասը վատ հատկություն և ստանում: Ամենից լավն այն ե, վոր չորացնելու նյութը փովի բարակ և փափուկ շերտով՝ կտավի, մաղի կամ տախտակն փողոցների վրա: Չորացնելուց հետո ծաղիկները պետք ե թեթև կերպով մատների արանքներում հարելով փոշխացնել, իսկ տերեները հեշտ են կտրատվում:

Արմատները, մաղմզուկները, պալարները, շատ անդամ չորացնում են թելի կամ պարանի վրա անցկացրած (որինակ՝ խաշնղեղի (քեզեն) և ձվատակի (Յառեպհան) գնդերը:

Ինչ վերաբերում ե արմատներին և մաղմզուկներին, կարելի յե դրանց թույլ տալ բացառիկ հանգամանքներում արեի տակ չորացնել: Չորացրած արմատները ծոելիս պետք ե կոտրատվեն և վոչ թե կունան, ճկվեն:

Հյութալի պտուղները՝ մորին (մալսա) և այլն հարսար ե, ինչպես ցույց տվինք, ուստական վառարանի մեջ չորացնել: Պետք ե այդ պտուղները բարակ շերտով փոել մաղերի, խախալների և ուրիշ հարմար բաների վրա և այնպես չորացնել, վոր մի կողմը շատ չայրվի, մյուս կողմից մասերը չբաժտնվեն, չկպչեն գնդեր դառնան և պահելիս չբորբոսնեն:

Սերմերը, վոր սովորաբար հավաքում են կատարյալ հաստունությունից հետո, թե պինդ են լինում և թե քիչ ջրիկ, չորացնելու քիչ հոգս են պահանջում, կարելի յե չորացնել մինչև անդամ բաց ողում:

4. ԲՈՒԺԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեղաբույսերը չորացնելով դեռ չի վերջանում նրանց հոգատարությունը: Չորացրած բուսական նյութը, մինչեւ նրա ծախու հանելը, պետք ե տաք պահպանել, ապա թե վոչ հավաքողի աշխատանքը կարող ե կորչել:

Զորացրած բուսական նյութը պետք և բոլորովին չոր, լավ քամնար, արեգակի վառ լույսից պաշտպանված տեղում պահել:

Մի շաբք հոտավետ գեղաբույսեր (որինակ՝ անանուխը, նարդոսը – (ԱՊՅԱՀԸ) և այլն, վորոնք իրենց հոտը հեղտությամբ են կորցնում, պետք և պահել անպայման հով տեղում: Տաք բնակարանում պահելուց կչորանա և կարող և փշրվել:

Բուսական նյութերի համար շատ վտանգավոր և խոնավությունը⁶, վորը, ինչպես հայտնի յե, նպաստում և բորբունելուն, փտերուն, բուժական ներզործող նյութերի լուծվելուն: Բուսական նյութերը պահեստում նույնպես փոշուց և միջատներից պետք և պաշտպանել. վոշին և միջատները հաճախ փշացնում են ապրանքը, որինակ՝ միջատներից հեղա են վնասվում խաշնդեղի (թշեռի) մազմզուկները, խտուտիկի (օդյանկակ) արմատները և այլն:

Հավաքած թարմ, հում գեղաբույսերը պետք և պահել փայտի արկղներում կամ տակառներում, նրանց չորս կողմը թուղթ փռած: Այն բուսական նյութերը, վորոնք իրենց մեջ հոտավետ և հոտը հեշտ կերպով կորցնող նյութեր ունեն (որինակ՝ անանուխի տերենները, նարդոսի ծաղիկը և այլն), պետք և պահել լավ ծածկվող ապակյա կամ թիթեղյա բանկաներում, ուրիշ բուսական նյութերից հեռու:

Այն բույսերը, վորոնք թունավոր նյութեր ունեն, ինչպես մոլիխինդը (ծելեհա), շնախաղողի (կրածօտկա), արջընկույզի (ծորմահ) տերենները, պետք և մյուս բուսական նյութերից նույնպես առանձնացած պահել, վորպեսզի դրանք իրենց թունավոր նյութերով չվարակեն մյուսներին (թունավոր բուժական նյութերի տեղը յերեխաններին անմերձենալի պետք և լինի):

⁶ Զորացրած բուսական նյութերը շատ շեղցում ունի խոնավությունը ծծելու ընդունակություն են ունենալու:

Մորու (մալահա), հապալասու (չերնիկա) պտուղները քսակներում կախված են պահում միջանցիկ ողի մեջ, վոր չի թողնում նրանց մեջ միջատների թրթուռներ զարդանան:

Ապրանքը վորեն տեղ ուղարկելիս պետք եւ հոգալ նաև նրա կանոնավոր տեղավորելու մասին, վորովհետեւ նա հեշտ է փշրվում և խոնավանում. տերեները և ծաղիկը լավ եւ արկղներում կամ տակառներում պնդացնել, խոկ այս նյութերը, վորոնք փշրվելուց կամ խոնավանալուց ապահով են (արմատները, սերմերը), առանց յերկյուղի կարելի յեւ պնդացնել քաթանի քսակների կամ խոփրե պարկերի մեջ:

5. ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Դեղաբույսեր հավաքելու մասին խոսելով, մենք գլխավորապես աչքի առաջ ենք ունեցել վայրի բույսերը: Սակայն բացի վայրի գեղաբույսերից, վոչ պակաս բժշկական նշանակություն ունեն, ինչպես հիշել ենք, նաև մշակվող բույսերը:

Բժշկական բույսերի մշակման հարցը շատ ընդարձակ է և պահանջում է մանրամասն պարզաբանություն, վոր չի կարող մտնել այս գրքույկի շրջանակի մեջ, այդ պատճառով ընդհանուր գծերով միայն կշռափենք:

Մշակության համար գեղաբույսեր ընտրելիս պետք է գիտենալ, թե ինչ բույսերի պահանջ կա և թե արդյոք այդ բույսերը հարմարվեմ են աեղական կլիմայական պայմաններին, ինչպես պետք է նրանց բազմացնել (սերմով, կըտրոններով, արմատներով, բաժան-բաժան անելով և այլն), վորտեղ և ինչ տեսակ սերմեր պետք եւ ձեռք բերել, ցանքի համար ինչպես պետք է պատրաստել հողը, ինչպիսի պարարտանյութերով պետք եւ հողը բարելավել, ծլածներին ինչպիսի խնամք պետք եւ տանել և այլն:

Թուսաստանում և Անդրկովկասում մշակվող գեղաբույսերից հայտնի յեն՝ տիգականեփը, անանուխը, աղբազբուկը (կատվախոտը — թալերսահա), գերչակը, անխոնը, յեղիսպակը (առլիքի), շնախազողը (բյանգին — կրասօքա-ծելլա-ծոնի), մատնոցուկը — (հապերտյանկա), քեմոնը (չամանը տմուն) և այլն:

ՎԵՐՉԱԲԱՆ

Մեզ մնում ե մի քանի կարևոր հանգամանք ևս շեշտել, գորոնցից կախված ե դեղաբույսերի հավաքման հաջողությունը: Առաջին գլխում ասացինք, թե ինչից պետք ե սկզբան դեղաբույսերի հավաքման գործը: Շեշտել ենք, վոր անհրաժեշտ ե նախապես, ճիշտ և բազմակողմանի ծանոթանաւ այն բույսերին, վորոնք նշանակված են հավաքելու համար, փորձի համար՝ ամբողջ բույսը վերցնել (իր տերևներով, ծաղիկներով, արմատներով), չորացնել լրագրի թղթի կամ փաթաթելու գորշ թղթի մեջ, թեթև ճնշման տակ (մի քանի անգամ թուղթը փոխելով, բույսի չորանալու ընթացքում), այդ չորացրած բույսերը ցույց տալ գիտակ մարդկանց (դյուղատնտեսների, դեղագործների) կամ ներկայացնել այն հիմնարկության, վոր կդնի այդ ապրանքը պատրաստողից:

Ավելորդ չի լինի վերցնել նաև պատրաստելիք ապրանքի նմուշները, հաստատ իմանալու համար, թե ինչ տեսքով ապրանքը պետք ե հանձնվի:

Յերրորդ գլխում արդեն ցույց տվինք, վոր արմատները և մաղմզուկները չորացնելուց առաջ պետք ե կեղևից մաքրվեն, մյուսներն իրենց կեղևի նետ չորացվեն, մի քանիսը ամբողջովին պետք ե չորացնել, մյուսներն առաջուց մանրացնել կամ կտորների բաժանել և այլն:

Հում դեղաբույսերն անպայման պետք ե լավ հատկություն ունենան և բուսական նյութի նետ շահադիտական նպատակներով յերբեք չպետք ե խառնել նրա նման այ-

իւառնուրդ; վոր ավելի հեշտությամբ և հավաքվում Դեղա-
րույս մթերող կազմակերպությունները հնարավորություն
ունեն կեղծիքը բաց անելու

Վերջացնելով մեր զբույցը, չենք կարող մի անգամ ևս
շնչառել այն հանդամանքը, վոր դեղաքույսերի մշակության
և նրա հավաքելու գործը չի կարելի շտապ ու վռազ ձեռնար-
կել: Նախապես պեսք և ամեն ինչ լավ մտածել, կշռել, խոր-
հրդակցել գիտակ մարդկանց հետ, կարդալ հասկանալի լեզվով
դրված զբանույկներ, նայել գեղաքույսերի նկարները և այլն,
իսկ յեթե գեղաքույսերի մշակման և հավաքման գործը կա-
տարվի առանց այդ նախապատրաստական աշխատանքի.
կարելի յե հենց առաջին քայլափոխում շատ սխալներ անել
և հիանթափած ձեռք քաշել այդ պործից:

Ա Տ Ե Ր Ա Յ Ը Ա Խ Ա Ս Ա Խ Ե Ր Ա Յ Ը Ա Խ Ա Ս Ա Խ Ե Ր Ա Յ Ը

1. Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԻՆՉ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐ ԿԱՐԵԼԻ ՑԵ ՀԱՎԱՔԵԼ ՑԵՎ ՄՇԱԿԵԼ

Մեզնում Անդրկովկասում գյուղական բնակչությունը շատ անդամ սպավում և վայրի բուսած այս կամ այն բժշկական բույսի մտսերից — արմատից, տերեխից, սերմից, ծաղկից։ Այդ վայրի դրությամբ բուսածները չեն կարող բարձարել ներկա պահանջները, մանավանդ, վոր շատ տեղ նրանք փչացել, սպառվել են, մնում և այժմ լուրջ ուշադրություն դարձնել նրանց մշակության վրա, քանի վոր դիղարույսերը տնտեսության արդյունավետ ճյուղերից մեկն են և մեր յերկրի կլիմայական և այլ պայմանները շատ նպաստավոր են գոնե մի քանի տեսակների մշակման համար։ Ճիշտ և, գեղարույսերի մշակությունն ավելի աշխատանք և պահանջում, քան հացարույսերի մշակությունը, բայց գեղարույսերի տված արդյունքը շատ ավելի յեւ։

Պատերազմից առաջ Ռուսաստանից մեծ քանակությամբ դեղարույսերի տերեներ, սերմեր են արտահանվել և վիրամշակված՝ 20—30 անդամ ավելի բարձր գնով, մեր դիղատներում ծախվել։

Այժմ շատ նահանգներում, ինչպես՝ Յարսուլավի, Տուրյի, Վորոնեժի, Տամբովի, Կաղանի և այլ տեղերի գյուղացիները պարապում են մեծ քանակությամբ միայն անանուխ (նյանա — մայո) մշակելով, վորից յեթերական յուղ են պատրաստում գործարաններում։ Տամբովի նահանգում

Անանուխը ցանում են ծխախոտի քաղից հետո. Նրա մշակության համար առաջուց շիթիւանոց են պատրաստում և այնտեղից ցանքատեղը փոխադրում են վերշոկ մնկը մյուսից հետու անկում, ջրում, քաղհանում, հողը փխրացնում և տերեւ հավաքում ծաղկելուց առաջ: Մեծ ցանքատեղում մինչեւ անգամ հնձում, են մանգաղով, իր տեղում թողնում, վոր չորանա, հետո հավաքում են, թակիչով (զեռ) ծեծելով մանրացնում, լցնում են քսակները և գործարան ուղարկում. բայց ավելի լավ ե քաղելուց հետո շուտով քամհար տեղ փոխադրել, սարայի տակ չորացնել, վոր իր կանաչ գույնը պահպանի Յուղ պատրաստելու համար քաղը լինում և միանգամից, ծաղկելուց հետո, ոգոսատոսին:

Անանուխի պահանջը մեծ է, նրա յուղը միայն դեղատներում չի դորժածվում. կանֆետ, հոտավետ յուղեր, սառողն և զանազան քաղցրավենիներ պատրաստելու համար անանուխ են դորժածում:

Անանուխի մշակությունը հաջող կզնավ հողերում, մեր այն դաշտավայրերում, վարտեղ ծխախոտի մշակույթ կատ: Անանուխը կարող է 2—3 տարի միենույն տեղում մնալ, լավ բերք տալ, հետո կարելի յե պարարտացնել հողը, նորից հերկել, փոցինել, հին արմատներից անանուխը նորից կենդանություն կատանա և 2—3 տարի ևս բերք կտա: Մի հեկտար տեղից կարելի յե ստանալ 7—16 ցենտներ չորտերե, առաջին տարին շատ, մյուս տարիներին՝ քիչ:

100 կիլո չոր տերեւից ստացվում է 2—2¹/₂ կիլո անանուխի յուղ, կամ մի հեկտար տեղից՝ 12—40 կիլո յուղ:

Բայց միայն անանուխը չե, վորի վրա պետք է մեր ուշագրությունը դարձնենք: Կան մի շարք դեղաբույսեր, վորոնց մշակության փորձեր յեղել են մեզնում Խորհ. Ի անտեսությունում Դորաքիլիսայում, Թեթևանում և լավ հետեանք են տվիկ Այդպիսիներից են՝ արջընկույզը, թուրինջխոտը (мелисса), յեղեսպակը (տալֆեն), աղբաղբուկը

(ՅԱԼԵՐԻԱՆԱ), ԽՆԿԱԺԱՂԲԻԿԸ (ՄԱՅՈՐԱՆ), ՄԱԹՆՈԳՈՎԱԿԸ (ԽԱ-
ՆԵՐԾՅԱՆԿԱ), ԽԱՉԴԵՂԸ (ՔԵՎԵՆԵ) և այլն.

1. ՅԵՐԻԳՈՎԻԿԸ (ԸՎԱՃԱՂԲԻԿԸ — ՌՈՄԱԿԱ) (Նկ. 1.) Վայրի
գրությամբ շատ տարածված ե լեռնային շրջաններում:
Առաջներում մեծ արտահանության նյութ եր՝ «Արազած»
անունով: Մաղիկները հավաքում են մայիսից, չորացնում
կիսամութ, քամճար բնակարանում, թիթեղյա կտուրի տակ,
բարակ շերտով ։ Փոելով փալասի վրան շուտ-շուտ շուռ
աալով: Յերիցուկը ծառայում ե վորպես քրանաբեր միջոց,
դողոցի դեմ: Նրա խաչուն ծառայում ե ծակոցի առաջն առ-
նելու, իսկ ծաղիկը՝ լվերը կոտորելու համար: Յերիցուկը
մշակելու համար սերմը սովորաբար աշնան են զցում—յեր-
կար, բայց նեղ ածուների մեջ, վոր հեշտ լինի մոլախոտերը
միջից հեռացնել. ծաղիկները հավաքում են հաջորդ տարին,
դեռ բոլորովին չհասած ժամանակը, վոր չթափվի:

Կա յերիցուկի ընտիր տեսակը — նոռմեյտիան յերիցուկ,
վորը բազմամյա բույս և 30' սանտիմետր բարձրությամբ.
արմատների մազմզուկները գրեթե հորիզոնական ուղղու-
թյուն ունեն: Ցողունները բազմաթիվ են և ճյուղավորված.
ցողունի և ճյուղերի ծայրի զամբյուղիկները բավական խո-
շոր են՝ 2—3 սանտ. շրջագծով:

Մաղիկը հավաքում են, յերբ ծաղկային զամբյուղիկները
բոլորովին բացվում են. հավաքելուց շուտով պետք է չո-
րացնել, հետեւելով, վոր գույնը չկորցնի: Բազմացնելու հա-
մար աշնանը հանում են նրանց արմատները, մաս-մաս
անում, չերմոցում տեղավորում, ձմեռն անցնելուց հետո
կարնանը հանում, ցանքատեղը փոխազրում և շարքերով,
25—30 սանտիմետր մեկը մյուսից հեռու, տնկում: Ամառը
քաղճանում են մոլախոտերը, շոգերին ջրում և 3—4 տարուց
հետո առաջգա ձեռվ նոր տեղում նորից տնկում:

2. Բաշճանիկը (յովշանը—ՌՕԼԵԿԻ) նույնպես շատ տա-
րածված և թե լեռնամասերում և թե դաշտավայրերում

վայրի դրությամբ. գործ են ածում նրա ծաղկած մասերը. մայիսին, հունիսին քաղում և շվաք տեղում չորացնում. նա ծառայում և վորպես զեղ վորկորուուցի (ՅՈՂՈՒԿԱ) դեղ- նացավի (ԿԵԼՄՈՒԿԱ) և բշտիկներ դուրս գալու զեմ:

3. Մօլիխինդը (բանգին - ծելեհա) թունավոր բույս և տարածված և թե՛ամրող Ռուսաստանում և թե՛ Անդր- կովկասում Բուսնում և բնակարանների մոտ, ցանկապա- տերի տակ, թափված աղբատեղերում. ձեռք տալիս կպչուս և, տերենները խիտ են, խոշոր, ատամնաձև, ծաղիկը մուգ զեղին զույնով, բաց մանուշակագույն ջղերով: Ամբողջ բույսը ծանր և անախորժ հոտ ունի: Տերենները հավաքում են հունիսին, ծաղկած ժամանակը, չորացնում են քամիար տեղում, բայց վոչ արենի տակ. չպետք և թողներ վոր չո- րացնելիս տերենները մուգ զույն ստանան:

Մոլիխինդը ծառայում և ինչպես հանգստացնող միջոց, ևս ոգնում և ջղաձղության զեմ, մեղմացնում և ցավերը:

Մշակված մոլիխինդի տերեններն ավելի արժեքավոր են, քան վայրի տեսակինը, նրանք բժշկական նյութեր ավելի շատ են պարունակում. Կարելի յե մշակել ամեն վայրում, վորանդ նա վայրի դրությամբ և բուսնում ե:

Պատերազմից առաջ տարեկան արտահանվել և Յեղբուզու մինչև 25.000 փութ մոլիխինդի տերեւ:

4. Արջնկալզը (Վշախնձորին - ծորմահ) սաստիկ թու- նավոր բույս և, տարածված և հարավային Ռուսաստանում և Անդրկովկասում. բուսնում և աղբատեղերում, քանջարա- նոցներում, պարաբրու և քիչ ավազային հողերում. բույսերի բարձրությունը հասնում է $1\frac{1}{2}$ — 2 արշինի, ցողունը շատ շիվեր ունի, տերենների մասն ավելի բաց գույն ունի, քան ներքեւ մասը, ծաղիկները խոշոր են, միւմի հատ և ճեր- մուկ. սերմը զանվում և պտղի մեջ, վոր ծածկված է փշիկներով:

Գործադրում են թե տերենները և թե սերմը. տերենները հավաքում են հունիս-հուլիս ամիսներին, ծաղկելու ժամա-

նակի, չորացնում են վոչ արևի տակ, սարայներում, քամհար և տաք տեղում:

Սերմը հավաքում են ոգոստոսին, յերբ պտուղներն սկսում են իրենց կանաչ դույնը կորցներ Պտուղները քամում, չորացնում են, մինչև վոր ճաքճքվում, բացվում են: Հասած սերմերը պետք ե սև գույն ունենան:

Տերեները ծառայում են վորպես ջղերի վրա սաստիկ ներգործող և ցավերը հանգստացնող միջոց, բացի այդ՝

նրա խաշուն ծխախոտի պես լավ միջոց և թրթուռները վոչնչացնելու համար:



Նկ. 3 բ.—Ցեղեսպակի տեսակը ծաղիկսերով

Սերմից հանում են ատրոպին ասված նյութը, վոր լայնացնում և աչքի բիբը և քրտինքը պակասեցնում: Վորտեղ վայրի դրությամբ արջընկույզ և աճում, կարելի յե մեծ տեղ տալ և նրա մշակությանը:

5. Ցեղեսպակի (Առլիք) (Նկ. 8 բազմամյա բույս և, սիրումն թարմ, փխրուն, թեթե, կրային հող և արեվահայաց տաք տեղի: Ցեղեսպակի ցողունը ներքեկի մասում փայտանման ե, իսկ վերև՝ փափուկ խոտանման, ունի շատ ճյուղեր՝ գորշավուն կարճ մազիկներով ծածկված, տերեների յերկարությունն առանց կոթիկների հասնում է 4—5 սանտիմետրի, լայնությունը՝ 2,5 ս.:

Ծաղիկները խոշոր են, կրկնաշրթունքներով, կապույտ-մանիշակագույն գույնով:

Բազմացնում են թե արմատներով, վորպես բազմամյա բույս, թե կտրոններով և թե սերմն ուղղակի ցանքատեղում շարքերով ցանելով:

Տերեները գործ են ածում քերանը վողողելու համար՝ կամ ներս են ընդունում վորպես կպչուն և պնդացնող միջոց։ Տերեր հավաքում են ողոստոսին, ծաղկելոց առաջ չորացնում են սարայներում և կտուրների տակ։

Թուսաստանում և արտասահմանում շատ տարածված ե յեղեսպակի մշակությունը. նրանից ստացվում է անուշահատ յեթերային յուզ, վոր խառնում են թանդարժեք ոճանելիքներին և սապոններին։

Մաղիկները շատ մեղրանյութ ունեն և լավ համ ու հոտ, շատ դրավիչ են մեղրների համար։



Նկ. 13 Խաշնդեպ

6. Խանջնեղը (գարծիր, խավարծիլ—rebecus) սիրում և թեթև կրային և գաճային հող, նրա պահանջը մեծ է, շատ շահեկան բույս է, սակայն մոտ 10-տարուց հետո յեն նրա արմատները կատարելապես զարգանում և ձեռքի հաստության հասնում։

Գործ են ածում արմատները, վոր հավաքում են ոգոսուից։ Արմատներն առաջ քամնար տեղում թառամեցնում—ձլրեցնում են, կտրատում և չորացնում հատուկ շինած վառարանում, կամ սովորական վառարանի մոտ դնելով։ Նա գործ և ածվում արյունային փորլուծության ժամանակ, փոքր չափով ծառայում և վորպես ստամոքսը պնդացնելու միջոց, իսկ մեծ չափով՝ վորպես թուլացնելու միջոց։

7. Թուրփնջիսօք (meliucca) կարելի յե մշակել թե հարավային թուսաստանում և թե մեղնում, վորտեղ բուսնում և վայրի դրությամբ։

Այս բույսը հասնում է մինչև 2 մետր բարձրության, ցողունը ճղավոր և ծածկված բմբուլով, տերեներն ընկած են գեմ ու դեմ, ծաղիկները ճերմակ են կամ կարմիր։

Տերեները քաղում են հուլիսին՝ ծաղկած ժամանակ, չորսցնում շվագում՝ սարայի կամ կտուրի տակ:

Թուրինջխոտը ծառայում է վորպես փքահան և թեթև դրասող միջոց:

8. Հազարատենվուկը (*тысячелистник*) (նկ. 2) բուսնում և դաշտերում, լլուրների վրա, չոր մարգագետիններում ևթիերի արանքներում. ցողունը հասնում է 5—8 վերշոկ բարձրության, տերեները քիչ բնբրտ են, ծաղիկները գտնվում են մանր ցողունների ծայրերին. Դործ են ածվում ծաղկագլուխները, տերեները:

Տերեները հավաքում են մայիսին, իսկ ծաղիկները հունիսին. Չորացնում են շվաք տեղումն Մառայում և իբրև ստամոքսի և աղիքների գեղ, ինչպես և մայասիլի (геморроид) գեմ և քրտինք բերելու միջոց. զործ և ածվումն վերքի դեմ:

9. Մատնացուկը (*каперстянка-красная*) Անդրկովկասում բուսնում և շատ տեղերում վայրի դրությամբ, սիրում և տաք տեղ, առաջին տարին զարգանում և արմատը և կարճ ցողուն և արձակում մի քանի տերեներով. յերկրորդ տարին ցողունը շվեր չի արձակում. ունենում է քիչ տերեներ և վերեի մասում մատնոցածե վարդակարմիք ծաղիկներ:

Յերկրորդ տարվան և բույսի միջին մասի տերեներն են զործ ածում, ծաղկած ժամանակը հավաքում են տերենակոթերը և տերեի միջի ջղերը հեռացնում են, քիչ տաք տեղում պահում:

Մատնոցուկը շատ գնահատելի բժշկական բույս ե. Նրա ծակության վրա ուշաղրություն պիտի դարձնել ձմեռվա ցրտահարությունից պաշտպանել. նա լավ աճում է թե սեանողերում, թե կավային և տիղմով հարուստ տեղերում: Թարմ աղբով պարարտացնելը և կամ շատ կրային հողը մնաս և տալիս:

Մի հեկտար տեղի վրա պահանջվում է 200—400 գրամ սերմ, վոր ցանում են շիթիլանոցում ապրիլի սկզբին. 7—10

որից ծլում, դուքս և գալիս: Յերբ մայիսին 3—4 տերեւ և
ունինում, տեղափոխում են ցանքատեղը և շարքը շարքից
ու թուփը թփից 12 վերջոկ հեռափորության վրա տնկում են:

Քաղհանը, զրելին անհրաժեշտ ե, ցողունի վերևի և ներ-
քի տերեներից մի քանիսը պետք ե պահել վոր ուժ տան
սերմի հասնելուն:

Մի հեկտար տեղից ստացվում է 15—25 ցենտներ թաք
տերեւ, կամ 3—5 ցենտներ չորը:

10. Տիգկանեփ (գենազերչակը — ռլեպեսիա): Տիգկանեփը
յուղատու բույս ե, նա հաջողությամբ կարող է մշակվել
այն բոլոր շրջաններում, վորտեղ աճում են՝ խաղող, բամ-
բակ, ծխախոտ և ջերմություն սիրող ուրիշ բույսեր: Տիգ-
կանեփը մեզնում միամյա բույս ե, բայց այն յերկրնե-
րում, վորտեղ ձմեռը տաք ե, ցրառություն չկա, նա բազ-
մամյա բույս ե և յերկար տարիներ ապրում ե, նրա թուփը
բարձրանում, ճյուղավորվում և ամեն տարի սերմ տալիս:
Հնդկաստանում նրա թփի բարձրությունը հասնում է մին-
չեւ 2 մետրի, նրա զիխավոր արմատը մինչեւ մի մետր մտնում
է հողի մեջ, շատ պինդ ե և ուժեղ, յերաշտին ավելի յեւ դի-
մանում, քան հացարույսերը, արևածաղիկը, յեղիպտացո-
րենը:

Տիգկանեփը սիրում է պարաբու, կամա ավազային հող,
սեահող, ուժասպառ հողերը կարելի յեւ պարաբուացնել հնա-
ցած դոմազբով, աշնան վարի ժամանակ, իսկ հանքային
պարաբուացիչ նյութերից՝ սուպերֆոսֆատով, թումաս-
զաքով և այլն:

Սերմը ցանում են ազբիլի սկզբին, յերբ որեւը տաք և
լինում և ցրտահարվելու յերկյուղ չկա: Սերմը կարելի յեւ
ցանել շարքացանով (հացարույսերի կամ բամբակի), ձեռ-
քով շարքերի մեջ շաղ տալով, կամ բների մեջ 2—3 հատ
մտցնելով՝ 4—5 սանտիմետր խորությամբ: Բամբակացան
մեքենայով սերմելու գեղքում մի հեկտար տեղին գնում ե

10 կիլոգրամ սերմ, իսկ հացաբույսերի սերմացան մեքենայով՝ կրկնակի, մինչև 20 կիլոգրամ։ Շարքերի հեռավորությունը մեկը մյուսից պետք է լինի 80 — 100 սանտիմետր, իսկ շարքերի մեջ թուփը — թփից՝ 50 — 60 սանտիմետր։ Շուտ ծլեցնելու համար սերմը մի որ առաջ թրջոց են դընում. յեթե հողը խոնավ է և յեղանակը աաք, սերմը ծըլում է 10 — 12 որից։ Այսուհետեւ խնամելու համար պետք է ջրել, մոլախոտերը հեռացնել և հողը փխրացնել։ Ապրիլին ցանած սերմը հասնում է ոգոստոսից մինչև նոյեմբերի ըրտերն ընկնելը։

Փոսերի մեջ 2 — 3 սերմ ծլելու դեպքում թողնում են մի հատ ամենից զորեղը, յերբ 2 տերե կա վրան. մնացածը հեռացնում են, կտրելով հողի յերեսից և վոչ թե պոկերով, վորից կարող են վրասվել մնացած բույսի արմատները։

Տիզկանեփի փնջիկների կնդուղները հենց վոր սկսում են հասունանալ, ճաքճքվելու նշանը ցույց տալ պետք է տուանց ուշացնելու սուր դանակով կամ մկրատով կտրել և զամբյուղների մեջ հավաքելով՝ փոխադրել չոր ու մաքուր տեղ, շորի վրա փոել, մի քանի անգամ շուռ տալ վոր լավ չրանանան, հետո ծեծելով սերմը կնդուղից բաժանել կլիյտոնի սերմազտիչ մեքենայով, խոշոր ու մանր սերմերն առանձնացնել։ Թփերի վրա լովի չհասած, կանաչ մնացած փնջիկներն անձրենից չեն վախենում. դրանց կարելի յե հավաքել, չորանոցում պահել և նույնպես ոգտագործել։

Տիզկանեփի փնջիկների քաղը լինում է յերեք անգամ՝ 2 — 3 շաբաթ ընդմիջումով։ Առաջին քաղը տալիս է բերքի 85 տոկոսը, յերկրորդ քաղը՝ 10 տոկոս, յերրորդ քաղը մոտ 5 տոկոս։ Մի հեկտար տեղից քաղած փնջիկները փուլու համար հարկավոր ե 400 քառակուսի մետր տարածությամբ հող։ Ավելի լովի է չրացնելու համար ցեմենտից կամ տախտակից շինած տեղ ունենալ արեկի տակ և անձրե զալու դեպքում բրեզենտով ծածկել յերեսը։ Մի հեկտար տեղից

ստացվում ե միջին հաշվով լավ խնամքի ժամանակ 10 — 15 ցենտներ (60 — 90 փութ) սերմ:

Տիղկանեփի մշակության մասին յեղած տեղեկություններից յերեսում ե, զոր Յերևանյան նահանգը 1892 թվին տվել ե 8000 փութ սերմ, իսկ 1893 թվին 12.000 փութ:

Խորհրդային Միության մեջ տարեց տարի աճում և տիղկանեփի մշակույթը՝ 1925 թվին ցանված ե յեղել 6329 հեկտար տեղ, 1929 թվին հասել ե 110 հազար հեկտարի, իսկ 1932 — 33 թվականներին, հնդամյակի վերջում յենթագրվում ե ունենալ 435 հազար հեկտար տեղ տիղկանեփի մշակույթի համար:

Խորհրդային Հայաստանի կոչեկտիվ անտեսություններն այդ ճյուղի վրա ուշազրություն պիտի դարձնեն, քանի զոր նրա կարիքը մեղնում մեծ և և հացաբույսերի հետ համամատած՝ ավելի շահավետ բռւյս եւ

100 կիլոդրամ տիղկանեփի սերմից ստացվում ե 30 — 50 կիլո ձեթ, զոր գեղատներում ծախումնն իրեն լուծողական՝ կառաւկա անունով:

Չեթը զործ են ածում գործվածքների գործարաններում, ներկատու նյութերի հետ խառնելով:

Դործ են ածում հոտավենո յուղեր պատրաստելիս: Ըստիր տեսակի սատոն են պատրաստում:

Դործ են ածում մեքենաներ, գործիքներ և կաշվից պատրաստած իրեն յուղերու համար:

Տիղկանեփի ձեթը վերջերս շատ կարելու նյութ ե համարվում՝ ողանակների զանազան մասերը յուղերու համար:

Տիղկանեփի թփերը ծառայում են իրեն վասելիք, իսկ նրանց մոխիրը՝ իրեն պարագանեցուցիչ նյութ:

11. Անիսոնը (ANIS) լավ աճում ե տաք, փխրուն կրախան, կավա-ավազային հողում և սեահողում:

Սերմը չեն ձգում միանդամից, այլ ընդմիջումներով, գարնանը, ցրտերն անցնելուց հետո: Խիս լինելուց նոսրաց-

հոռմ են, յերբ հասունանում ե, ձեռով քաշերով հանում են, կեղտից մաքրում, շվաքում փռած չորացնում։ Մի հեկառ տեղից ստացվում ե 500 — 800 կիլոգրամից ավելի սերմ։

Միանգամից չի հասունանում. յերբ թփի վերիի մասը և սերմը սկսում են մուգ գույն ստանալ, քաղում են, փռում շրի վրա, չորացնում, հետո ծեծելով, սերմը քամու տարրվ բաժանում են և քսակների մեջ պահում։

Թուսաստանում տարածված ե անխոնի մշակությունը. մեզնում՝ Խ. Հայաստանում նույնպես շատ նպաստավոր պայմաններ կան նրա մշակության համար։

Անխոնը դեղաբույս ե, վոր գործածվում և փորի քամիները հանելու համար՝ նրանցից քաղցրավենիներ են պատրաստում, զործ և ածվում նաև լիկորներ պատրաստելու համար։ Նրա յուղը դեղատներում խառնում են դառը դեղերի հետ, վոր քաղցր համ ստանան։

12. Մեկօնք (*խաշխաշը — MAK*), յուղատու բույս և ափիոն — ոպիում ստանալու համար. շատ տարածված ե Պարսկաստանում, Հնդկաստանում, Թյուրքիայում և Յեղիպատում. Անդրկովկասում մշակվում ե Բագվի նահանգում. մեզնում փորձեր են յեղել Արարատյան դաշտավայրերում և Լենինականի շրջանում։ Մեծ հաջողություն կունենա նրա մշակությունը ոպիումի համար, մեր շրջանի հողերում։

Խաշխաշի տեսակները շատ են, բուսանում ե և վայրի դրությամբ։ Ափիոնի (օպիում) համար վորպես դեղ ընդունված ե ճերմակ սերմ ունեցող տեսակը։ Նա մի տարրվա բույս ե, բարձրանում ե մինչեւ մի մետր և ավելի. կնդուղներն առաջ կանաչ են լինում, հետո դեղնավուն դույն են ստանում։ Սերմը մանր ե, բաց դեղնագույն. կնդուղի մեջ լինում ե մի քանի հազար սերմ, նայած մեծության։

Մշակության տեղի հողը պետք ե պարարտ, մոլախությ աղատ և փուխր լինի, կավա-ավգային, սևահող։

Խաշխաշի սերմը պետք ե ցանել շարքերով, արանքնե-

րում 50—60 սանտիմետր տարածություն թողնելով, վոր բանվորի համար հեշտ լինի անցուղարձր: Թփերը խիս լինելու դեպքում նոսրացնում են, յերբ 12—16 սանտիմետր բարձրության են հասնում, և շարքերում իրարից 25—30 սանտիմետր հեռու յեն թողնում: Քաղնանը, ջրելք անհրաժեշտ եւ Ափիոնի — խաշխաշի ծաղիկը ճերմակ ե, կա և մուզ կտրմիր տեսակը, վորի սերմը ու գույն ունի:

Ափիոն ստանալու համար հուլիս — սեպտեմբեր ամիսներին, քանի վոր կնպուղները դեռ կանաչ են, բանվորները սուր գանակով նրանց կողքերի կեղեվի վրա, առանց ներս մացնելու՝ գծեր են քաշում, որվա տաք ժամերին, այն եւ սուազուցան ժամի 10-ից մինչև ժամի 2—3-ը: Գծեր քաշուց կեղեւի յերեսին դուրս են գալիս կաթիլներ, վորոնք թանձրանում, զորշ գույն են ստանում, յեթե արեի տակ յերկար մնում են. զրա համար ել խակույն պետք եւ քերիչով կնպուղից այդ հյութը մաքրել եցցնել գոտու մեջ պնդացրած ամանը: Մի բանվորը կարող է հավաքել որական 250—300 զրամ հյութ: Այդ հյութը պետք է տափակ ամանի մեջ ածել, դնել արեկի տակ եւ թողնել մինչև չորանա, պնդանա հետո կարատել 5-ական զրամով եւ նորից դնել արեկի տակ:

Հեղուկ մասը չորանալուց հետո կորցնում է 30—40 տոկոսը:

Մի հեկտար տեղից ստացվում է 12—16 կիլոզրա՞ ոպիում: Ռազմական գույն բերող և ցավերը մեղմացնող միջոց եւ շատ է գործածվում դեղեր պատրաստելիս: Զինաստանում, Հնդկաստանում ոպիումը գեղհատներ (պիլցուներ) շինած՝ ծխում են:

Պետական կարիքները բավարարելու նպատակով Խուստանում ոպիում ստանալու համար 1920 և 1921 թվականներին թույլատրվեց 4 զավառներում մեկոն (խաշխաշ) ցանել 900 հեկտար տեղ, վորից 36 ցենաներ հում ոպիում ստացվեց, իսկ 1922 թվին ստացվել է 14 տոկոս բարձր վորակով մորֆի:

Դաշտային մեկսանի ծագիկները: Մեզնում ամեն տեղ շատ տարածված և ինքնարույս մեկոնը (խաշխաչը), նրա ցողունը և տերենները ծածկված են կոշտ մաղիկներով. ծաղիկում և հունիսից մինչև ոգոսատոն, քաղում են չոր յեղանակներն, ծաղկաթերթերը բարակ շերտով փռում, չորացնում բռնուվ և պինդ փակվող թիթեղյա արկղների մեջ պահում, դոր խոնավություն չծծի:

Համը դառն ե, դործ և ածվում ինչպես թեթև փախուական միջոց:

18. Տօւղա (ալոե): Տուղով շատ տարածված և մեզնում պարտեղներում և այլ տեղերում: Նա յերկամյա կամ յերեքամյա բույս ե, հասու ցողուններով, 2—3 մետր բարձրությամբ. տերենները խոշոր են, զանազան զույններով—էերժակ, կարմիր, վարդագույն, մանիշակապույն և այլն: Սիրում և թեթեվ և թարմ հող:

Ցողունից մազաթերթը հանելով՝ պատրաստում են զործվածքներ և թուղթ: Իրեն զեղ գործ և ածվում նրա արմատը, փորպես ցավերը մեզմացնող միջոց:



Նկ. 14 Մատուտակ

14. Մատուտակ (բիան — լակրապա) (Նկ. 14): Շատ տարածված և Անդրկովկասում, մանավանդ Գանձակի նահանգում, վայրի զրությամբ: Տարիներ առաջ Ուշարի և Լյաքի յերկաթուղային կայարանների մոտ գործարաններ կային, վորանց չորացնում, մամլում եյին մատուտակը և վազոններով: Այժմ մի զործարան և մնացել Ուշարի կայարանի մոտ, վոր պատկանում և Շիանը ակցիոններական ընկերության: 1925—26 թ. բիանի արմատ արտահանվել

և 134.200 ցենտներ՝ 2.010.000 ռուբլու արժողությամբ:

Այդ շրջանի գյուղացիներն իրենց պարապ որերին ըդրադրվում են բիսնի արմատները հանելով, վոր հանձնում են գործարանին՝ ցենտները 3 ռուբլով:

Ա. Հայառանում, չնայելով այն հանգամանքին, վոր մատուտակը բուսնում, և անջրդի տեղերում՝ վայրի գրությամբ, այդ բույսի վրա ուշաղը ություն դարձնող չկա, այնինչ ուրիշ յերկրներում մշակում են արհեստական կերպով:

Մատուտակը սիրում է խոր, ավաղախառն հող: Արհեստական կերպով մշակելիս ցանքատեղը պարաբացնում են գոմազրով: Բազմացնում են արմատներով: Ծնկելուց հետո միենույն տեղում թողնում են 3—4 տարի, վոր լավ աճի, արմատները լավ զարգանան:

Մատուտակի արմատները հանում են գարնան սկզբին, դեռ չուր չընկած ժամանակ, այն ե՛ մինչեւ միջի հյութը բարձրանալը: Հանում են բահերով և տրակտորին լծուծ դռւթաներով: Հողի յերեսը դուրս յեկածները հավաքում են փոշխով և սայլերը բարձրծ՝ գործարան փոխադրում:

Արմատները կտրատելու և ջարդելու համար հատուկ դաշտեկներ և գործիքներ կան:

15. Ազբաղբանկը կամ կատվախօսը (Յալերսահա-մայն) (նկ. 10) բուսնում և սարալանջերի վրա, անտառների շրջակացքում, ջրարբի դաշտավայրերում: Մազկում և հունիսից — ոգոսուած ծաղիկները հովանոցաձեւ են, կարմրաներմակ գույնով:

Բժշկականության մեջ գործադրվում են րա արմատներից պատրաստած դեղը, զվարավորապես ջղային հիվանդության վեմ և քրտինք բերելու համար:

Կա աղբարդուկի և մանր տեսակը, վոր սիմսիմուկ են անվանում. գործածվում են թե ուտելու և թե բժշկականության մեջ իրեն զրդուիչ, քրտնարեր, կրծքացավի, հազի, ջղային զրդուման և այլ ցավերի վեմ. իր բուժիչ հատկության հարհիվ շատ հնուց հայտնի յետնային բժշկության մեջ:

16. Թեկտինեն (արաժահրի, դժնկենի մամիսի, բանզի — (կրյահա) (նկ. 8) միջակ բարձրության ծառ է, աճում ելեռունային շրջաններում, ծաղկում է, մայիսից — ոգոստոս. բացի այս, վոր ծաղիկը մեղրատու յե, նրա կեղեց բժշկության մեջ գործ ե ածվում ե իրեն լավ լուծողական:

17. Կապանջար (խտուտիկ, կոթնուկ, փամբուշա — օդյանչուկ) (նկ. 6) շատ տարածված է մեղնում իրրե ինքնաբույս. տերենները յերկար են, տտաֆիավոր և դուրս են դալիս գետնի յերեսից: Մաղկագլուխները ծածկված են ըլմրուններով, վոր մի փոքր քամուց թափկում են. ցողունը կըսրելուց միջից դառնահամ կաթ և դուրս դալիս:

Կոարանջարի արմատները գործ են ածվում զանազան հիվանդությունների գելմ:

Պատերազմից առաջ տարեկան 1000 ցենտներ կոարանջարի արմատներ են արտահանվել:

2. ՎՈՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԻՆՉ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐ ԵՆ ԾԱՂԿՈՒՄ ԱԳՐԻԼԻՆ.

Կոարանջար — օդյանչուկ

Հովտաշուշան — լանջատ

ՄԱՑԻՍԻՆ

Կոարանջար (խտուտիկ):

Կաղնի — ծյս

Արջախաղող — տոլոկյանկա

Զաման (քիմոն) — տմոն

Հապալասի — չերնիկա

ՀՈՒԽԻՍԻՆ

Հազարատերենուկ — тысячелистник

Տուղտ — алтей

Զաբան

Արջախաղող

Շնախաղող — белядонна

Արջընկույզ (փշախնձորի) — дурман

Մոլեխինդ (բանդի) — белена

Յերիցուկ (լվածաղիկ) — ромашка

Մանանիս — горчика

Կոտրանջար

Աղբաղբուկ (կատվախոտ) валериана

ՀՈՒԽԱՐԻՆ

Հաղարատերենուկ

Տուզտ

Բարձմննիկ (յովշան) — полынь

Չաման

Արջընկույզ

Մոյեխինդ

Մանանիս

Յերիցուկ

Անանուխ (նյանյա) — мята

Կոտրանջար

Լորի — липа

Աղբաղբուկ

ՈԴՈՍՏՈՍԻՆ

Հաղարատերենուկ

Տուզտ

Բարձմննիկ

Յերիցուկ

Կոտրանջար

ՍԵԳՏԵՄԲԵՐԻՆ

Հաղարատերենուկ

Կոտրանջար

Յ. ՎՐԴ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԻՆՉ ԴԵՂԱՐՈՒՅԱԵՐ ԿԱՐԵԼ ՑԵ ՀԱՎԱՔԵԼ

ԱՊՐԻԼԻՆ

Արջախաղողի տերենները
Կուարտնջարի արմատները

ՄԱՅԻՍԻՆ

Հովտաշուշանի ծաղիկները
Ցեղևսպակի, արջախաղողի, մոլոշի (մալիօս) տերենները

ՀՅԻՆԻՄԻՆ

Ցերիցուկի, հազարատերենուկի, լորու ծաղիկները:
Մատնցուկի (Կապերտինակ), շնախաղողի, մոլեխինդի,
յեղիսպակի, արջընկույզի, արջախաղողի տերենները:
Խոտեղենից՝ բարձմենիկը, հազարատերենուկը, մոլոշը:

ՀՅԻԼԻՄԻՆ

Ցերեցուկի, մոլոշի, լորու ծաղիկները:
Անանուխի, բարձմենիկի, հազարատերենուկի, տուզաի
տերերը:

ՈԴՈՍՏՈՍԻՆ

Հապալասու (Կլյուշա), թանթրվենու (բյուսինա) հասա-
պտուղները
Անիսոնի (ԱԿԱԾ), չամանի պտուղները
Խոտեղենից՝ բարձմենիկը, հազարատերենուկը:
Կուարանջարի, աղբաղրուկի արմատները:
Մոլեխինդի, մանանեխի սերմերը:

ՄԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Անիսոնի պտուղը
Կուարանջարի, աղբաղրուկի արմատները
Արջընկույզի, գինձի (Կօրսանձր) սերմը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Գիհու (МОЖИСЕВЕЛЬНЯК) պոտովը:
 Կոարանջարի, աղբաղբուկի, մատուտակի (լակրից),
 ուղարքի արմատները:
 Աերկելի, մանանեխի, արջընկույզի սերմերը:

4. ԹԱՐՄ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԸ ՉՈՐԱՑՆԵԼՈՒՑ 100 ՔԱՇԻՑ ՔԱՅԻ ՏՈԿՈՍՆ Ե ՍՏԱՑՎՈՒՄ

Յերիցուկի	ծաղկից	25	տոկոս
Հաղարատերեռուկի	»	28	»
Էրուու	»	28	»
Մոլոշի	»	20	»
Շնախաղողի	shrubից	13	»
Մոլիխինզի	»	13	»
Արջընկույզի	»	11	»
Արջախաղողի	»	20	»
Բարձմենիկի	խաժից	20	»
Մատուտակի	արմաթից	33	»
Կոարանջարի	»	40	»
Աղբաղբուկի	»	40	»
Մորու	պազից	12	»
Հաղարատու	»	15	»

5. ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԸ ՉՈՐԱՑՆԵԼՈՒՑ ՆՐԱՆՑ ՔԱՆԴ ՏՈԿՈՍՆ Ե ԿՈՐՉՈՒՄ

Տերեները կորցնում են 86 — 55% հաճախ 80%	
Սաղիկները	» 80 — 70% հաճախ 75 %
Խոտեղինը	» 92 — 65 » » 70 — 75 »
Կեղալը	» 60 — 40 » » 45 »
Գետնի առկ գանվող մասերը	
»	80 — 60 » » 65 »

Մեղրածուծի (donnik) խոտը, ծաղկով,

ցողուններով կիլոն 3—4 ռ.

Հապալասու պտուղը կիլոն 5—7 ռ.

Գետք և աչքի առաջ ունենալ հակ կատելու և ճանապարհի այլ ծախսերը, մինչև ընդունելության ահղը հասնելը։ Խեղաքույսեր մեծ քանակությամբ ընդունում են թե Մոսկայի Սելյսկօօյզ-ը (Большая Дмитровка) և թե Նրա ստունմունքները մեծ քաղաքներում։

Ա. Հայաստանում դիմել այդ մասին Հայրուժպետառ։

ՎԵՐՉԱԲԱՆ

Բժշկական բույսերը 400 տեսակից ավելի յեն. մենք աչքի առաջ ենք ունեցել և ընարել այն բույսերը, վորոնք արդյունագեր են և մեր տեղական հողային և կլիմայական պայմաններին՝ մատչելի։

Հայրուժպետառը, Հողժողկոմատը, կորտնտեսությունները, խորհանտեսությունները, Հայկոռպը—վոչ մի միջոց չպետք է խնայեն ավելի լայն հիմքերի վրա գնելու այն գեղարույսերի մշակությունը, վորոնք արդեն մշակվում են մեզնում. մեծ կարիք կա թե նոր տեսակները մշակելու, թե ինքնարույս տեսակները հավաքելու և թե անծանոթ մնացածներն ուսումնասիրելու։

Գրքույկիս Բ. մասը կազմելիս աչքի առաջ ենք ունեցել հետեւյալ հեղինակների ցուցմունքները։

Ա. Կ. Պոգորեցկիй—Пособия по сбору и культуре лекарственных растений.

2. М. В. Рытов—Русские лекарственные растения.

3. Дубровин—Лекарственные растения.

4. Հ. Դ. Ալիշանի—Հայ բուսակ.

5. Հ. Գ. Մենեվելյանի—Բուսաբանություն.

6. Роллов—дикорастущие растения.

7. Միմոնյանց—Մեղրատու բույսերը. Անդրկովկասում։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040296

4164 20 419.

A —
—
4603

В. П. КЛАШНИКОВ

КАК СОБИРАТЬ
ЛЕКАРСТВЕННЫЕ РАСТЕНИЯ



АРМЕНГИЗ-ЭРИВАНЬ